# 10 ՀԱՐՑ՝ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(հարցաշար՝ հասարակական կազմակերպությունների եւ լայն շրջանակների համար)

1.Խոշորացման գործընթացի վերաբերյալ ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը: Ձեր կարծիքով՝ կարող է այն լուրջ հիմքեր ստեղծել տեղական ինքնակառավարման համակարգի եւ տարածքների հետագա զարգացման համար:

2.Առաջարկվում է խոշորացման երկու մոդել՝ «փնջային» եւ «շրջանային»: Ծանո՞թ եք այս մոդելներին, դրանցից որն եք առավել արդյունավետ համարում մեր երկրի դեպքում:

3.Ի՞նչ կարեւոր ռիսկեր եք տեսնում գործընթացն իրականացնելիս եւ ի՞նչ քայլերով է հնարավոր դրանք չեզոքացնել:

4.Առաջարկվող մոդելներով արդյոք արդյունավետ մեխանիզմներ ստեղծված են տեղական իշխանությունների օտարումը բնակչությունից բացառելու համար: Ի՞նչ նոր մեխանիզմներ կմատնանշեք բնակչություն-տեղական իշխանություն կապը արդյունավետ դարձնելու համար:

5. Արդյո՞ք տեղական հանրաքվեների արդյունքները պետք է որոշիչ լինեն այն դեպքում, երբ Սահմանադրության մեջ վերապահում է կատարված այդ մասով:

6. Ձեր կարծիքով՝ բարեփոխումները կարո՞ղ են նպաստել առավել արդյունավետ, գործուն եւ կարող տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ ավագանու, ձեւավորման համար:

7. Ի՞նչ կարծիքի եք բնակավայրերի ընդհանուր ժողովի գաղափարի, համայնքի ղեկավարի ընտրության եղանակների (ուղղակի, թե անուղղակի) մասին:

8.Ձեր գնահատմամբ՝ ի՞նչ առաջնահերթ քայլեր պետք է իրականացնի գործընթացի պատասխանատու մարմինը՝ բարեփոխումների հաջողությունն ապահովելու համար:

9.Ինչպիսի՞ն են Ձեր առաջարկությունները հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:

10.Արդյո՞ք այսօր երկիրը պատրաստ է նման բարեփոխումների եւ եթե այո, դրանց իրականացման ինչպիսի՞ ժամկետներ եւ եղանակներ (փուլային, միաժամանակյա եւ այլն) կառաջարկեիք: